



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍՏԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ

Կիրակի, Յունիս 11-ին, տեղի ունեցավ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի ամալերջի հանդէսը եւ վկայականներու բաշխումը, Հոլիվուտի «Կարապետեան» սրահին մէջ: Իբրեւ Առաջնորդ Սրբազան հօր ներկայացուցիչը, Գերայ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ եղաւ սոյն ձեռնարկին եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորութեան մաղթանքները: Ներկայ էին նաեւ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զհնյ. Վասիլեան, հոգաբարձութեան անդամներ, ծնողներ եւ բարեկամներ:

Կիրակնօրեայ վարժարանի տեսուչ, տիար Րաֆֆի Թորոսեան իր բացման խօսքով, բարի գալուստ մաղթեց բոլորին:

Առաջին եւ երկրորդ կարգերու աշակերտները իրենց մանկական անուշ ձայներով եւ խանդավառութեամբ մասնակցութիւնը բերին յայտագրին, արտասանելով ոսկեղէն համարներ եւ երգելով շարականներ: Նախակրթարանի, 7-րդ եւ 8-րդ կարգերու աշակերտները խմբային եւ առանձին արտասանութիւններով եւ հոգեւոր խմբերգներով ճոխացուցին յայտագիրը: Պատանեացի աշակերտները խմբերգներուն:

Արժ. Տ. Վիգէն Ա. Զհնյ. Վասիլեան քաջալերական եւ գնահատանքի խօսքեր ուղղեց աշակերտներուն, ծնողներուն, Տիար Րաֆֆի Թորոսեանին եւ ուսուցչական կազմին:

Կատարուեցաւ ուղերձի ընթերցում: Շրջանաւարտ աշակերտները սրտի մեծ գոհունակութեամբ ստացան իրենց վկայականները, եւ յուշանուէրներ տրամադրուած Կիրակնօրեայի տեսուչին, եկեղեցւոյ հովիւին եւ հոգաբարձութեան կողմէ:

Այս ուրախ առիթով Կիրակնօրեայ դպրոցի կողմէ յուշանուէրներով ուսուցչական կազմին աշխատանքը գնահատուեցաւ:

COMMENCEMENT CEREMONY OF ST. GARABED CHURCH SUNDAY SCHOOL

On Sunday, June 11, 2006, the Sunday School of St. Garabed Church held its commencement ceremony at "Karapetian" Hall. Very Rev. Fr. Muron Aznikian

represented the Prelate and offered his blessings and congratulatory remarks. Also in attendance were Archpriest Vicken Vassilian, Board of Trustees members, parents, and friends.

The ceremony began with welcoming remarks by Sunday School Director Mr. Raffi Torossian, followed by an artistic program by the students.

Archpriest Vassilian then imparted remarks of encouragement and praise to the students, parents, Mr. Torossian, and the staff of the Sunday School.

At the conclusion of the ceremony diplomas and mementos were awarded to the graduating students, and mementos were also offered to the staff as appreciation for their hard work.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆՆ ՈՒ ԱՔԱՐ ԱՓԻՆԵԱՆԸ

Երեքշաբթի, Յունիս 27-ին, Ազգային Առաջնորդարան այցելեցին բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեան եւ Յայաստանէ՝ Արուեստի Միջազգային Ակադեմիայի Նախագահ՝ Աքար Ափինեան:

Առաջնորդ Սրբազանը հիւրերուն տեղեկութիւններ փոխանցեց Ազգ. Առաջնորդարանի ապագայ աշխատանքներուն եւ նոր շէնքի ծրագիրներուն մասին: Հիւրերը իրենց կարգին, խօսեցան իրենց անմիջական աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին:

ALICIA GIRAGOSSIAN AND APKAR APINIAN VISIT THE PRELATE

On Tuesday, June 27, poet Alicia Giragossian and International Arts Academy President Apkarak Apinian (from Armenia) visited the Prelate.

During their visit, the Prelate informed his guests about the future projects of the Prelate and the plans for the new building. The guests imparted information about their current ventures.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, Յունիս 27-ի երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Հայրն ու Ազգ. Վարչութեան անդամները այցելեցին Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցի ու հանդիպում ունեցան եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ հոգաբարձութեան հետ:

Ժողովի ընթացքին խօսուեցաւ եկեղեցւոյ բարեգարդման աշխատանքներու մասին եւ զեկուցում տրուեցաւ անմիջական գործունեութեան մասին:

THE PRELATE AND EXECUTIVE COUNCIL VISIT FORTY MARTYRS CHURCH PASTOR AND BOARD

On the evening of Tuesday, June 27, the Prelate and Executive Council members met with the Pastor and Board of Trustees of Forty Martyrs Church of Orange County. Plans for the remodeling of the church were discussed during the meeting, and information was conveyed about the current activities of the church.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻՋԵՌՆԱՐԿԻՆ ԵՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ

Ըստ տարիներու աւանդութեան, այս շաբաթավերջին տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.-ի Նաւասարդեան 31-րդ մարզախաղերու փակման մրցումներն ու հանդիսութիւնները՝ ախոյեանական մրցումները եւ հինգօրեայ փառատօնը, ՎԷՆ Նայսի Birmingham մարզադաշտին վրայ:

Ուրբաթ, Յունիս 30-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, տեղի պիտի ունենայ յատուկ արարողութիւն եւ ջահավառութիւն: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ դարձեալ պիտի օրհնէ Նաւասարդեան 31-րդ Մարզախաղերու աւանդական կրակը:

Նաւասարդեան մարզախաղերու յաղթանակի պարահանդեսը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունիս 1-ի երեկոյեան, Universal Hilton պանդոկի մէջ: Այս տարուան Նաւասարդեան Մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնած են՝ Տէր եւ Տիկին Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեանները:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, փոխանցելու իր օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները:

Երեքշաբթի, Յունիս 4-ին, տեղի պիտի ունենայ փակման հանդիսութիւնը, նոյն մարզադաշտին մէջ: Ծանօթ է որ այս մարզախաղերուն փակման հանդիսութիւնը աւանդաբար տեղի կ'ունենայ Միացեալ Նահանգներու Անկախութեան տօնին օրը եւ այս ձեւով, երկու տօնակատարութիւններ կը մէկտեղուին:

Առաջնորդ Սրբազան հայրը պիտի փոխանցէ փակման հանդիսութեան իր պատգամն ու օրհնութիւնները:

PRELATE TO ATTEND H.M.E.M. NAVASARTIAN GAMES VICTORY BALL AND CLOSING CEREMONY

In following tradition, the closing events of H.M.E.M.'s 31st annual Navasartian games and festival will take place this weekend at Birmingham High School in Van Nuys.

The opening ceremony and the lighting and blessing of the torch will take place on Friday, June 30, at 7:30 p.m. Rev. Vazken Atmajian will represent the Prelate.

The Navasartian Victory Ball will take place on Saturday, July 1, at the Universal Hilton Hotel. The honorary presidents of this year's games are Mr. & Mrs. Hovsep & Elizabeth Boyadjian. The Prelate will attend the Victory Ball and will convey his blessings and best wishes.

The closing ceremony will take place on Tuesday, July 4th. The Prelate will deliver his closing message and blessings.